


ԾՐԱԳԻՐ



ԱՐԱԳ ՀԱՇՎԱՐԿ

ՀԱՇՎԱՐԿ ՄՏՔՈՒՄ

«ԹՎԵՐՆ ԵՆ ԻՃԵՏՈՒՄ ԱՃԵՍԱՐՀԻՆ»
ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍ

Հայտնի է բազմապատկման մոտ երեսուն ընդհանուր միջոց: Մեզ մոտ տարրական դասարաններում կիրառվող բազմապատկման միջոցը համարվում է ամենահարմարը դասավանդման համար, բայց ամենեվին ոչ ամենառացիոնալը պրակտիկայում:

Հարկ է համառորեն պնդել յուրացնելու այն միջոցը, որն հնդիկները անվանել են կայծակնային. այդ մասի գրում է Լ.Ս.Կոզանը իր «**Բանավոր հաշվարկ և հաշվարկի ռացիոնալացում**» գրքում:

Պարզագույն մտագործողությունների արագությունը հաստատվում է մեկ րոպեում ճիշտ լուծված պարզագույն թվաբանական գործողությունների միջոցով. « Народное образование » 1982թ. № 10.

Ի.Ֆ.Սլուդսկին գրել է. « **Պարզ ու հասարակ հաշվելու անկարողությունը հանդիսանում է արդի ընդհանուր թերությունը այն աստիճանի, որ մենք դա չենք տեսնում, չնայած իր հասցրած վնասի** »:

Երեք ակադեմիկոսներ պնդում են. « **Մաթեմատիկայի ծրագրերն ու դասագրքերը, մեր կարծիքով, պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին. - մաթեմատիկայի ուսումնասիրումը պետք է նպաստեն աշակերտների մոտ բանավոր հաշվարկի կայուն ունակությունների մշակմանը** »:

Եվ հաշվարկի մեթոդները պետք է փոխվեն:

«**Մաթեմատիկայի, որպես ամենաճշգրիտ գիտության նկատմամբ հավատը, հաճախ վերածվում է հաշվարկի այն մեթոդների օպտիմալության և անսխալականության երկրպագության, որոնք մենք կիրառում ենք դպրոցում: Յուրաքանչյուր միջամտություն առօրեական, բայց մեր կողմից լավ յուրացված հաշվարկի մեթոդների մեջ, հաճախ առաջացնում է բողոք (երբեմն անգիտակից), որն հիմնականում ուղղված է նոր մեթոդների դեմ**»- գրում է Ա.Սորոկինը:

Հարգելի ընթերցող. բազմապատկեք, խնդրում եմ, երկանիշ երկու թիվ, ասենք 97 x 86... Ի՞նչ դժվար է, որ. վերցնում ենք հաշվիչը... և պատասխանը պատրաստ է:

Ոչ, Դուք ինձ մինչև վերջ լսեք. ոչ մի հաշվիչ, համակարգիչ... Դե, լավ, կասի ընթերցողը, կվերցնի թուղթ ու մատիտը, ու դպրոցական մեթոդով կկազմի այունակ և, պատասխանը կներկայացնի:

Դուք նորից բոլոր պահանջները մինչև վերջ չլսեցիք. հաշվել ոչ միայն առանց տեխնիկայի, այլև առանց գրենական պիտույքների. հաշվել բանավոր, մտքում:

Ինչպե՞ս բանավոր: Չէ որ դա շատ բարդ է, թեպետ կարելի է փորձել: Մի քանի անհաջող փորձերից հետո ասենք երկու գրում ես, յոթը պահում մտքում, մոռացումից և խառնաշփոթից հետո գալիս ենք վերջնական եզրակացության. դա ԱՆՀՆԱՐԻՆ Է:

ՀՆԱՐԱՎՈՐ Է

«Նույնիսկ անհնարը հնարավոր է»
Ա.Բլոկ

Արագ հաշվողները – մարդիկ, ովքեր տիրապետում են արագ հաշվարկի մեթոդիկային, կարող մեկ ակնթարթում մտքում հաշվել, օրինակ, թվի քսաներեք աստիճանի արմատը մի թվից, որն ունի մոտ երկու հարյուր նշան: Այսպիսին էր խնդիրը, որն հանձնարարված էր հնդկուհի Շակունտալա Դեվիին: Նա պիտի մրցեր ԱՄՆ – ի ամենաարագ համակարգչի հետ: ԵՎ մարդը հաղթեց: Դեվին լուծեց խնդիրը 50 վայրկյանում, իսկ համակարգիչը՝ միայն 60:

Եվ Փրանսիայում տարիներ առաջ ֆիզիկոսներից, մաթեմատիկոսներից, կիրեռնետիկներից և հոգեբաններից կազմված հեղինակավոր ժուրիի ներկայությամբ Մորիս Դագբերը վեճի մեջ մտավ ԷՀՄ-ի հետ, որը վայրկյանում կատարում էր միլիոն գործողություն, իսկ Դագբերը նույնիսկ հայտարարեց, որ կգիջի մեքենային և կճանաչի իրեն պարտված, եթե մեքենան լուծի յոթ խնդիր ավելի շուտ, քան ինքը՝ տասր: Դագբերը կատարեց հանձնարարությունը՝ 3 րոպե 43 վայրկյանում լուծելով տասը խնդիր, իսկ ԷՀՄ-ը՝ յոթը՝ 5 րոպե 43 վայրկյանում: Այս անգամ էլ մարդկային ուղեղը առաջ անցավ համակարգչից:

Ուկրաինայում ևս անց կացվեց նման հետազոտություն ԳԱ կիրեռնետիկայի ինստիտուտում պոլիտեխնիկ ինստիտուտի ասպիրանտ Իգոր Շելուշկովի հետ: Նա ևս փայլուն հաղթանակ տարավ «Միր» անունով ԷՀՄ – ի նկատմամբ:

Բանավոր հաշվարկի համաշխարհային ռեկորդը պատկանում է Ժենեվի միջուկային հետազոտությունների էվրոպական կենտրոնի աշխատակից, հոլանդացի մաթեմատիկոս Ուիլյամ Կլեյնին: Նա 18 աստիճանի արմատ է հանում 133 նիշ ունեցող թվից: ԷՀՄ -ը բարձրացնում է վեցանիշ թիվը 37 աստիճան և հանձնում է Կլեյնին: Վերջինս էլ դուրս է բերում այդ թվից եղած 228 նիշով 27 աստիճանի արմատը 3 րոպե 26 վայրկյանում:

Կլեյնի ծառայությունից օգտվում է ինստիտուտի տեսական բաժինը:

Իսկ Դեվին օգնում է հնդկական բանկերին՝ ստուգել միլիարդային հաշվեհամարները:

Արագհաշվարկողների մեջ կան ընդհանրապես անգրագետ մարդիկ, նույնիսկ կույրեր: 1972թվականին դոկտոր Օստին և մաթեմատիկոս Մենտ-Լագեն քննում էին կույր հաշվարկող Լուի Ֆլերիին: Նրան առաջարկեցին 707.363.209 թիվը. այն պետք էր վերածել ինչ որ թվի խորանարդի և չորսանիշ թվի: Ֆլերին մտածեց 28 վայրկյան և տվեց ճշգրիտ պատասխանը՝ 892խորանարդը և 5238.

Անգլիացի վիրտուոզ հաշվարկող Բակստոնը այդպես էլ չսովորեց կարդալ:

Ամերիկացի Թոմաս Ֆալլերը մահացավ անգրագետ 80 տարեկանում:

Դեվին էլ երբեք դպրոց չէր գնացել:

Դե, նրանք մարդ-ֆենոմեններ են, և մեծահասակներ, ոչ երեխաներ:

Բայց կան և երեխաներ:

ԵՐԵԽԱՎՆԵՐ-ԱՐԱԳՀԱՇՎԻԶՆԵՐ

1812 թվականին գիտնականների ուշադրությունը գրավեց ութամյա Չիրա Կուրերին: Նա կարող էր մտքում թիվը բարձրացնել իննը աստիճան: Նրան խնդրեցին ասել, քանի վայրկյան կա 48 տարվա մեջ: Նա պատասխանեց ակնթարթորեն- 252 միլիոն 286 հազար 001, իսկ հետո ասեց վայրկյանների քանակը:

Մեր ժամանակում էլ թերթերը գրեցին մեկ այլ ֆենոմենի մասին՝ հարավսլավացի 11-ամյա Բորիս Գաջինսկու մասին: Նրան առաջարկեցին քսաներկու աստիճանի արմատ հանել 34.851.736.846.557.611.451.872 թվից: Տղան մեկ թույլ մտածեց ու ճիշտ պատասխան տվեց՝ 8: Հետո դարձյալ տրվեց այլ թիվ՝ 536.436.517.684.435.454, որից պետք է հանվեր արմատ երեսուն մեկ աստիճանի. և ս մեկ թույլ և նորից ճիշտ արդյունք – 4:

Շատ արագահաշվիչների մոտ այդ ֆենոմենալ պարզևը բացահայտվել էր դեռ մանկուց: Դեվին խաղում էր թվերով դեռ չորս տարեկանից, երբ մյուս աղջիկները տիկնիկի հետ էին խաղում: Փրանսիացի Լիդորոյի մոտ՝ երեք տարեկանից, երբ նա դեռ չէր կարողանում ոչ կարդալ, ոչ գրել: Հայտնի շատ մաթեմատիկոսներ, ինչպիսիք են Հաուսսեր, Էյլերը, Ամպերը և այլք, տիրապետում էին արագ հաշվարկին:

Հաուսսի մոտ այդ պարզևը դրսևորվել էր դեռևս երեք տարեկանում: Նա հետևում էր հոր հաշվարկներին և, երբ նա ավարտեց , Հաուսսն ասաց. «Հայրիկ, հաշվարկը ճիշտ չէ»: Վերահաշվարկը ցույց տվեց, որ փոքրիկը ճիշտ էր:

Շատերը չգիտեին , որ իրենք արագահաշվիչ են: Երբ լույս տեսավ Վիկտոր Պեկկելիսի հոդվածները «հրաշք-հաշվիչների» մասին, և կարդալով արագ հաշվարկիչ աշխարհահռչակ ֆենոմեն Արագոյի մասին, Յուզեֆ Պրիխտոկոն հանկարծ հասկացավ, որ ինքն էլ կարող է դա անել: Նա հիշեց, որ դպրոցում հաշվարկի ժամանակ երբեք չի օգտվել գրառումներից:

Իհարկե, բանավոր հաշվարկի այդպիսի արագությունը, որն ցույց էին տալիս Դեվին, Դագբերը, Գաջինսկին և մյուս արագահաշվիչները, հասանելի է ոչ բոլորին, բայց սովորել շատ ավելի արագ հաշվել , առանց որևէ հաշվիչ գործիքի, կարող է ամեն ոք, միայն թե ցանկություն լինի և, իհարկե, մատչելի ու գործուն մեթոդիկաներ:

Կասեն, դե, նրանք վունդերկինդներն են, ոչ բոլորը կարող են այդպես:

Բոլորը կարող են, բայց ոչ այդպես: **«Յուրաքանչյուրը կարող է անել այն, ինչ անում են ուրիշները»**, - գրել է Թոմաս Յունգը: ԵՎ նրան կարելի է հավատալ – լույսի ալիքային տեսության հեղինակ, ով նվագում էր բոլոր երաժշտական գործիքների վրա:

- Դա հնարավոր չէ սովորեցնել:
- Կարելի է, եթե համակարգ լինի:
- Բայց համակարգ չկա:
- **ԿԱ:**

ԲԱՆԱՎՈՐ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

«Բանավոր հաշվարկը գիտականորեն մշակված համակարգ է: Եթե կա համակարգ, նշանակում է այն կարելի է ուսումնասիրել, հետևել, տիրապետել» - գրել է Պեկկելիսը իր գրքում:

Մաթեմատիկոսները վաղուց մշակել են մեթոդիկաներ, որոնք կտրուկ բարձրացնում են մտքում հաշվարկի արագությունը: Դրանցից մեկը պատկանում է պրոֆեսոր Տրախտենբերգին, որը բազմակողմանի օժտված և հրաշալի ճակատագրի տեր մարդ էր: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, 1941թվ-ին ֆաշիստները փակեցին նրան համակենտրոնացման ճամբարում: Որպեսզի գոյատևի անմարդկային պայմաններում և չկորցնի հոգեկան հավասարակշռությունը, նա մտքում սկսեց մշակել արագ հաշվարկի մեթոդիկա: Ճամբարի չորս տարիների ընթացքում նրան հաջողվեց ստեղծել արագ հաշվարկի կուռ համակարգ:

Պատերազմից հետո Յյուրիխում Տախտենբերգը կազմակերպեց իր մաթեմատիկական ինստիտուտը, միակը իր տեսակում, ուր երեխաները և մեծերը սովորում ու վերասովորում էին հաշվել նոր մեթոդիկայով և, նրանց միահամուռ խոստովանությամբ, հաջողությունները ապշեցուցիչ էին և վայելում էին մեծ ճանաչում:

Տրախտենբերգին հաջողվեց արագ հաշվարկը սովորեցնել նույնիսկ մտավոր հետամնաց համարվող (համենայնդեպս՝ մաթեմատիկայից) երեխաներին:

Ավելին. պարզվեց, որ պարզ ու հեշտ հնարների հաշվարկով հրապուրանքը փոխարկվեց մաթեմատիկայի նկատմամբ մեծ հետաքրքրությամբ:

19-րդ դարում, Ռուսաստանում, ռուս ինտելիգենցիայի փայլուն ներկայացուցիչներից մեկը՝ Ս. Յու. Ռաչինսկին դասավանդում էր Մոսկվայի համալսարանում, բացում է դպրոց ճորտ երեխաների համար և ինքն էլ դասավանդում մաթեմատիկան: Նա գրում է. **«Զիասցրեցի սկսել մտավոր հաշվարկի վարժությունները, երբ նրա նկատմամբ դրսևորվեց իսկական մոլեռանդություն»:**

Մեկ հարյուրամյակ անց արագ հաշվարկող Գոլդշտեյնը ոչ միայն բեմից ցույց էր տալիս իր ընդունակությունները, այլև բանավոր արագ հաշվարկի ջերմ պրոպագանդիստն էր: Գրելով մի քանի գրքեր, նա ակտիվորեն պայքարում էր արագ հաշվարկը դպրոց մտցնելու համար: Մնում էր միայն ցանկություն՝ մտքում արագ հաշվարկելու համար և, գործուն ու դյուրըմբռնելի մեթոդիկաներ:

Հիշեցնեմ չինական հնագույն ասացվածքը. **«Ճանապարհը միլիոն լի երկարությամբ՝ սկսվում է առաջին քայլից»:**

Ակադեմիկոս Ա.Ա. Սմիռնովը, ով ուսումնասիրում էր այս հիմնախնդիրը, պնդում էր, որ Պրիխոդկոն և նմանները ի ցույց են դնում մարդու ուղեղի ծայրերում թաքնված հսկայական պահուստները:

ԻՆՉՈՒ

«ԱՄԵՆ ԻՆՉ ՀՈՍՈՒՄ Է,
ԱՄԵՆ ԻՆՉ ՓՈՓՈԽՎՈՒՄ»
ՀԵՐԱԿԼԻՑ

Դեռ 1930 թվականին Գուդշտեյնը գրել էր. «15-րդ դարում, որպեսզի բազմապատկեն, ասենք, 7-ը 8-ով, նախատեսվում էր կատարել վեց միջանկյալ գործողություններ»: Այսօր այդպե՛ս ենք հաշվում: Բնական է ենթադրել, որ այսօրվա մեթոդներն էլ վերջնական չեն. այն կարող ենք և պետք է փոխենք: Դ-ա, ես կարծում եմ, մեր մանկավարժների մեծ ու կարևոր խնդիրն է»:

Ա.Ի. Լուկը «Սովորել մտածել» գրքում գրում է. «Միջնադարում՝ բաժանում կատարելու համար, պետք էր համալսարան ավարտել: Այն էլ ոչ բոլոր համալսարանները կարող էին այդ իմաստությունը սովորեցնել: Պետք էր գնալ Իտալիա. այնտեղի մաթեմատիկոսները ավելի հմուտ էին»:

Եթե հիշենք, որ այն ժամանակ հաշվում էին հռոմեական թվերով, ապա պարզ է դառնում, թե ինչու միլիոն թվերի բաժանումը հասու էր միայն մորուքավոր այրերին, ովքեր դրանով զբաղվում էին իրենց ողջ կյանքում:

Հնարավոր է, հարց կառաջնա, ինչու է պետք բանավոր հաշվարկը, եթե կան հաշվիչ մեքենաներ: Այս հարցին պատասխանել է Պեկեյիսը իր՝ «Զո հնարավորությունները, մարդ» գրքում. «Բանավոր, կայծակնային հաշվարկը հրաշալի մարմնամարզություն կդառնա ստեղծագործող մտքի խթանման համար»:

Այդ առիթով մեծ նկարիչ և մանկավարժ Ն.Կ.Բերիիսը գրել է. «Դպրոցներ պետք է մտցնել մտածողության մասին գիտությունը ոչ որպես վերացական հոգեբանություն, այլ որպես պրակտիկ հիմք հիշողության, ուշադրության, կենտրոնացման, դիտողունակության. իհարկե, բացի սրանցից, շատ որակներ պահանջում են զարգացում. հստակությունը, արագությունը, ընդհանրացումը այլն:

ԻՆՉՈՒ ԴՊՐՈՑՈՒՄ

Այն, որ արագ, բանավոր հաշվարկի ժամանակ զարգանում են նշված որակներից շատերը, հաստատում է Ա.Գ.Ստակոլովը իր «Բանավոր հաշվարկ» գրքում: Նա գրում է. **«Բանավոր հաշվարկի ժամանակ զարգանում են մարդու այնպիսի որակները, ինչպիսիք են ուշադրությունը, կենտրոնացումը, դիմացկունություն, կոփվածություն, ինքնուրույնություն»:**

Չենք խոսում այն մասին, թե ինչ օգուտ է լինում երեխայի մաթեմատիկական ունակությունների զարգացմանը: Նա գրում է. **«Կիրառելով մաթեմատիկական գործողությունների օրենքները բանավոր հաշվարկում, դուք ոչ միայն կրկնում ու ամրապնդում եք դրանք, այլև ամենակարեվորը, յուրացնում եք այն ոչ մեխանիկորեն, այլ գիտակցաբար: Սա բանավոր հաշվարկի առաջին ու ամենաշոշափելի օգուտն է»:**

Գաղտնիք չէ, որ տարրական դասարանի համարյա բոլոր սովորողները հաջողությամբ ավարտելով բազմապատկման աղյուսակի սերտում (շեշտում են՝ մեխանիկական անգիր), ավարտում են իրենց թվաբանական կրթությունը և այնուհետ, տասից հետո բոլոր թվերի հետ գործողությունները կատարում են «այուներով» կամ հաշվիչով:

Մենք առաջարկում ենք երեխաներին ուսուցանել ոչ նման նախաջրհեղեղյան մեթոդներով, այլ մտքում՝ արագ, պտերնատիվ հաշվարկով, որն առավել ռացիոնալ է, քան տրադիցիոն մեթոդները:

Տեղեկատվական մաթեմատիկայում կա հասկացություն՝ «Բարդության բիտ», որը ցույց է տալիս, թե որքան գործողություն պիտի կատարվի և սպացուցում. արագ հաշվարկի մեթոդիկայով քառակուսի բարձրացնելը ավելի հեշտ է և, քանիցս ավելի արագ, քան տրադիցիոն միջոցները: Անհավանական է. այդ մեթոդիկաները շատ ավելի հեշտ են և արագ կատարման մեջ, բայց դրանցից չեն օգտվում:

Մենք կատարեցինք ժամանակաչափում թվաբանական ու հանրահաշվական գործողությունների և, մտքում արագ հաշվարկի, վրա ծախսված, որում հեշտորեն սպացուցվեց վերջինիս առավելությունը:

Հանրահայտ արագահաշվարկող Արանիա Դիամոնդին ասում էր, որ թվերին տիրապետել իրեն օգնում է գույնը: Հաշվարկման ընթացքը իրեն պատկերվում է անվերջ սիմֆոնիայի միջոցով: Այդպիսի ունակությունով օժտված էր Յուրի Նովիկովը: Ըստ նրա՝ **«հաշվարկը - դա մի գունավոր սիմֆոնիա է, արագ դասավորվող գունավոր կարգ, որն էլ արդյունքն է, իսկ ինձ մնում է դրանք դարձնել թվեր»:**

Նրանց նման հաշվել՝ գույների միջոցով, ժամանակը դեռ չի եկել, բայց հաշվել մտքում, ինչպես Գոլդշտեյնը և այլոք, որոնք ինքնաուսուցմամբ են հասել դրան, կարելի է:

ԺԱՄԱՆԱԿԸ ՎԱՂՈՒՑ Է ԵԿԵԼ:

ԱՐԱԳ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԻԿԱ

1. Եթե պետք է բազմապատկել երկու երկանիշ թիվ, որոնք ավարտվում են 1-ով. **31 x 31, 41 x 41, 91 x 91**, (քառակուսի բարձրացնել), ապա անհրաժեշտ է.

Օրինակ. **31 x 31.**

3-ը բազմապատկել **3-ով**

$$3 \times 3 = 9$$

3-ին պետք է գումարել **3**

$$3 + 3 = 6$$

Մեկը բազմապատկել **1-ով**

$$1 \times 1 = 1$$

Պատասխան. 31 x 31 = 961

ՍՏՈՒԳՈՒՄ

31

x

31

31

93

961

2. Եթե պետք է բազմապատկել երկու երկանիշ թիվ, որոնք ավարտվում են 5-ով. **15 x 15, 25 x 25, ... 95 x 95**

Օրինակ **35 x 35.**

3-ը պետք է բազմապատկել իրեն հաջորդող թվով

$$3 \times 4 = 12$$

Պատասխան. 31 x 31 = 961

ՍՏՈՒԳՈՒՄ

35

x

35

175

105

1225

3. Եթե պետք է բազմապատկել երկու երկանիշ թիվ **իններորդ տասնյակում** (քառակուսի բարձրացնել), ապա անհրաժեշտ է.

Օրինակ **96 x 96.**

Գտնել այդ թվի տարբերությունը հարյուրից.

$$100 - 96 = 4.$$

96-ից հանել այդ չորսը

$$96 - 4 = 92$$

4 x 4 = 16 և կցել **92 -ին**

Պատասխան. 96 x 96 = 9216

ՍՏՈՒԳՈՒՄ

96

x

96

576

864

9216

ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԸ

- **ՈՐՐՆ Է ՀԱՄԱՎՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՃԻՇՏ ՄԵԹՈԴԻԿԱՆ:**

1. Բառարանից դուրս գրել առարկայի բոլոր հասկացությունները, տերմինները:

2. Ավելացնել նորերը:

3. Հեռացնել հնացած հասկացությունները:

4. Խմբավորել զույգերով – հականիշեր:

5. Բոլոր հասկացությունները դիտարկել բաժանել, դասակարգել:

6. Սահմանել հասկացությունների անմիջական կարգը և ՏՏԷՀ – ը:

Ընդհանուր մեթոդիկան իր մեջ պարունակում է այդ պահանջները:

- **ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԱՎՈՐ Է, ԹԵ՛ ԽԻՍՏ:**

Հերթականությունը խիստ է:

- **ԻՍԿ ԵԹԵ ԽԱՆՏՎԻ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Դա կդառնա Միգիֆյան աշխատանք:

- **ԻՆՉՈՒՒ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Ինֆորմատիկայի համաձայն, եթե խնդրի լուծումը պահանջում է աշխատանքի հաջորդականություն-ալգորիթմ:

- **ԻՆՉ Է ԱԼԳՈՐԻԹՄԸ:**

Գործողությունների խիստ հաջորդականություն, որն էլ հանգեցնում է անհրաժեշտ արդյունքին:

- **ԻՆՉՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԵԼ ՀԱՄԱՎՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԱԼԳՈՐԻԹՄԻ:**

Անհրաժեշտ է հասկացությունները և սահմանել, և բաժանել: Այդ երկու մտավոր գործողություններն էլ ցույց կտան դասը:

ՄԵԹՈԴԻԿԱ
ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ
ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հնարավոր է՝ խնդիրների լուծման համար ստեղծել այնպիսի մեթոդիկա, երբ օգտագործելով մեկ ալգորիթմ՝ լուծել խնդիրների ողջ բոլոր: Եթե թվաբանության մեջ գոյություն ունի չորս բոլոր խնդիր - **շարժման, աշխատանքի, տոկոսների** -մի մասի-և **թվերի կարգի** համար, ապա բոլոր խնդիրները տոկոսի մասին, լուծել մեկ մեթոդիկայով:

Այդ մեթոդիկան համեմատական է և գումարած խաչի կանոնը. եթե պահանջվում է պատրաստել երկու լուծույթներից նոր լուծույթ: Մնում է աշակերտներին պատրաստել այդ մեթոդիկայով՝ քննությունները հաջողությամբ հանձնելու համար:

Պահանջվում է այդ ամենը կատարել խիստ հաջորդականությամբ՝ լավագույնս հասկանալու համար, և սխեմաներով՝ լավ պատկերացնելու համար: Դիդակտիկայի մեջ, որպես ուսուցման մասին գիտություն, կան սկզբունքներ, որոնցից մեկը հայտարարում է – պարզից դեպի բարդը և, **наглядности** սկզբունքը: Այսինքն պատկերային. սխեմաներ, գրաֆիկներ և այլն:

Քանի որ, մասնագետների պնդմամբ, սխեմաները հասկանալի են առանց թարգմանության:

Խնդիրները պետք է լուծվեն թվաբանորեն, առանց փոփոխականների՝ **X** և **Y**, ներդրման և, առանց հավասարումներ կազմելու, որովհետև դրանք թվաբանական խնդիրներ են և ըստ սահմանման թվաբանությունը գիտություն է թվերի մասին և չի զբաղվում փոփոխականներով և հավասարումներով: Դրանք հանրահաշվի ֆունկցիաներն են:

Եվ, ամենագլխավորը. շատ ավելի հեշտ է խնդիրները լուծել թվաբանորեն, քանի որ օգտագործվում են միայն չորս թվաբանական գործողություններ: Եվ չկա երկու անհայտով կամ բանաձևերով հավասարության համակարգ: Արդյունքն էլ չի լինի այնքան տխուր ինչպես, ասենք, 2011 թվ-ին Ռուսաստանում, երբ ՄՊԶ-ն մաթեմատիկայից չհանձնեցին 800 000 շրջանավարտների 5%-ը: Դա նշանակում է 40 000 հոգի չստացան հասունության ստեստատ:

Նոր մեթոդիկայի անհրաժեշտությունը կասկած չի հարուցում:

Նրա հիմքում ընկած է քիմիա առարկայից՝ լուծույթների (առանց ռեակցիայի) խնդիրների լուծման մեթոդիկան - խաչի կանոնը, որն օգտագործում է միայն թվաբանական գործողությունները:

Ի՞նչը պետք է գտնել :

1. Գտնել թվի տոկոսը.

200-ի 2 տոկոսը: $200 : 100 = 2$. $2 \times 2 = 4$

2. Գտնել թիվը տոկոսի միջոցով.

4 դա 10 տոկոսն է. 100 տոկոսը դա որքան է՝

$100 : 10 = 10$. $10 \times 4 = 40$

3. Գտնել երկու թվերի տոկոսային հարբերությունները

100 -ը 200 – ի որ տոկոսն է՝

$100 \times 100 = 10000$. $10000 : 200 = 50$

ԽՆԴԻՐՆԵՐ

№ 1. Համեմատությունների միջոցով տոկոսային խնդիրների լուծման մեթոդիկա.


Համեմատությունը դա երկու հարաբերությունների հավասարումն է: $2 / 3 = 4 / 6$

Տոկոսը (մեկ)- դա թվի մեկ հարյուրերորդական մասն է: Այն նշվում է - % :

Տոկոսը գտնելու համար անհրաժեշտ է.

Հայտնի տվյալները գրել № 1, 2 և 3 շրջանակներում, իսկ ոչ հայտնիները - ?


4-րդ շրջանակում:



Անհայտը գտնելու համար պետք է երրորդ շրջանակի տվյալները բազմապատկել երկրորդ շրջանակի տվյալներով և բաժանել առաջին շրջանակի տվյալների վրա:


? – հարցական այս նշանը կարող է լինել մյուս շրջանակներում ևս:

Ուղիղ համեմատական կախվածություն: Քանի անգամ փոքրանում (կամ մեծանում) են թվերը 1 - ից մինչև 3-րդ շրջանակներում, նույնքան մեծանում (կամ փոքրանում) են թվերը 2 – ից մինչև 4-րդ շրջանակներում:





Լուծույթները և համաձուլվածքները մեխանիկական խառնուրդ չեն:

Լուծույթը կազմված է լուծիչից և լուծվող նյութից



№ 2. 100 գրամ լուծույթը լցրեցին 50գր երկու բաժակների մեջ:



$$\begin{array}{l} 50 \text{ ————— } 15 \\ 100 \text{ ————— } ? \end{array}$$



$$\begin{array}{l} 100 \times 15 = 1500 \\ 1500 : 50 = 30 \end{array}$$

Տոկոսային կենտրոնացումը չի փոխվել:

100գր. լուծույթի մեջ 30 գր լուծվող նյութը – դա 30 % լուծույթ է:

100գր. լուծույթի մեջ 40 գր լուծվող նյութը – դա 40 % լուծույթ է:

№ 3. ԽԱՍՆԵՑԻՆ ՆՈՒՅՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ 2 ԼՈՒԾՈՒՅԹ:



$$200 \text{ ————— } 60$$

$$100 \text{ ————— } ?$$


$$100 \times 60 = 6000$$

$$6000 : 200 = 30$$

ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ ՉԻ ՓՈԽՎԵԼ:

№ 4. ԱՎԵԼԱՑՐԵՑԻՆ ԼՈՒԾԻՉ (ՉՈՒՐ):
20 ԳՐԱՄ

Ինչպի՞ն է ստացված լուծույթի տոկոսային կոնցետրացիան:



$$120 \text{ ————— } 30$$


$$100 \text{ ————— } ?$$

$$100 \times 30 = 3000$$

$$3000 : 120 = 25$$

ՊԱՏԱՍԽԱՆԸ: 25

№ 5. ԱՎԵԼԱՑՐԵՑԻՆ ԼՈՒԾՎԱԾ ՆՅՈՒԹԸ - 40 ԳՐԱՄ:
ՈՐՔԱՆ Է ՍՏԱՑՎԱԾ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ:



$$140 \text{ ————— } 70$$


$$100 \text{ ————— } ?$$

$$100 \times 70 = 7000$$

$$7000 : 140 = 50$$

ՊԱՏԱՍԽԱՆ: 50


№ 6. ԱՎԵԼԱՑՐԵՑՐԻՆ ԼՈՒԾԻՉ (ԶՈՒՐ) և ԼՈՒԾՎՈՂ ՆՅՈՒԹ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՈՒՄ 30 – ԱԿԱՆ ԳՐԱՄ:
ՈՐՔԱՆ Է ՍՏԱՅՎԱԾ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ:



$$100 \times 60 = 6000$$

$$6000 : 160 = 37,5$$

№ 7. ՊԱԿԱՍԵՑՐԻՆ (ԳՈԼՈՐՇԱՑՐԻՆ) ԼՈՒԾԻՉԸ (ԶՈՒՐԸ):
ՈՐՔԱՆ Է ՍՏԱՅՎԱԾ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ:



$$80 \times 30 = 2400$$


$$100 \times 30 = 3000$$

$$3000 : 80 = 37,5$$


№ 8. ԽԱՌՆԵՑԻՆ ՏԱՐԲԵՐ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ 2 ԼՈՒԾՈՒՅԹ:

100 գր. 20 % և 200 գր. 40 % ԼՈՒԾՈՒՅԹ.

ՈՐՔԱՆ Է ՍՏԱՅՎԱԾ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ:



$$100 + 200 = 300$$



$$300 \text{ ————— } 100$$

$$100 \text{ ————— } ?$$


$$100 \times 10 = 10000$$

$$10000 : 300 = 3,3$$

ԽԱՉԻ ԿԱՆՈՆՐ

Եթե տրված է երկու լուծույթ և պահանջվում է նրանցից ստանալ նոր լուծույթ, ապա այդ խնդրի լուծման համար կիրառում ենք **խաչի կանոնը**:


Առաջին լուծույթի հայտնի տոկոսային բաղադրությունը գրում ենք № 1 շրջանակում, իսկ երկրորդ լուծույթի բաղադրությունը գրում ենք № 2-ում. իսկ № 3 շրջանակում գրում ենք պահանջվող բաղադրությունը:



Առաջին շրջանակից հանում ենք կենտրոնական՝ երրորդ շրջանակի տվյալները և գրում № 5-ում. № 2-ից հանում ենք կենտրոնականի տվյալները և գրում № 4 շրջանակում: Եթե որևէ տեղ թիվը փոքր է, ապա միշտ մեծից հանում ենք փոքրը:

Օրինակ. Պահանջվում է 40% և 10% լուծույթներից պատրաստել 25% լուծույթ: Յուրաքանչյուրից որքա՞ն մաս պետք է վերցնել:

Առաջին լուծույթի կոնցենտրացիան - 40% գրում ենք № 1-ն շրջանակում, իսկ երկրորդը՝ 10% -ը № 2 շրջանակում: Կենտրոնում գրում ենք պահանջվող կոնցենտրացիան:



$40 - 25 = 15$ և 15-ը գրում ենք № 5 շրջանակում:

$25 - 10 = 15$ և 15-ը գրում ենք № 4 շրջանակում:

Եթե թվերը նման են, ինչպես մեր օրինակում՝ յուրաքանչյուր շրջանակում 15 – ական, ապա վերցնում ենք նույնաքանակ լուծույթ նոր՝ 25% լուծույթ ստանալու համար:


Եթե թվերը նման չեն, օրինակ՝ 20 և 10, ապա կրճատում ենք 10-ով, ստացվում է 2 և 1: Ուրեմն պետք է մի լուծույթից վերցնել 2 մաս, իսկ մյուսից՝ 1 մաս: Որպեսզի չխառնվի, կետագծերով նշված է, թե որ լուծույթից որքան մաս եք վերցնելու:

№ 9. ԵՐԿՈՒ ԱՆՀԱՅՏՈՎ ԽՆԴԻՐՆԵՐ.

Եթե պահանջվում է պատրաստել որոշակի քանակությամբ լուծույթ, ապա օգտվում ենք խաչի և համեմատության կանոնից:

Օրինակ. Պահանջվում է պատրաստել 25 %- ոց **800 գ. լուծույթ**՝ 40% և 10% -ից: Յուրաքանչյուրից որքան մաս պետք է վերցնել: Սկիզբը, ինչպես նախորդ խնդիրներում:

Առաջին լուծույթի- 40%, **կոնցենտրացիան գրում ենք** - № 1 շրջանակում, իսկ երկրորդ լուծույթինը՝ 10% , գրում ենք № 2ում: Կենտրոնում լրացնում ենք պահանջվող քանակը:



$40 - 25 = 15$ և, պատասխանը՝ **15**, գրում ենք **№ 5** շրջանակում:


$25 - 10 = 15$ և, պատասխանը՝ **15**, գրում ենք **№ 4** շրջանակում:

Թվերը նույնն են և **5** և **4** շրջանակներում՝ 15. ուրեմն վերցնում ենք նույնաչափ մասեր 25% լուծույթի համար՝ յուրաքանչյուր 400 գր. համար:

Օրինակ. Պահանջվում է պատրաստել 20%- ոց **800 գ. լուծույթ**՝ 50% և 10% -ից:

Յուրաքանչյուրից որքան մաս պետք է վերցնել:

Առաջին լուծույթի - 50%-ը կոնցենտրացիան գրում ենք № 1 շրջանակում, իսկ երկրորդ կոնցենտրացիան՝ - 10%, գրում ենք № 2 շրջանակում: Կենտրոնում լրացնում ենք պահանջվող քանակը:



$50 - 20 = 30$ պատասխանը **30**, գրում **№ 5** շրջանակում:

$20 - 10 = 10$ պատասխանը **10**, գրում **№ 4** շրջանակում:

30 և **10** կրճատում ենք հարմարության համար **10-ով**, ստանում ենք **3** և **1 մասեր**:

$3 + 1 = 4$. Կազմում ենք համեմատություն:

800 գ. ————— **4 մաս**

? ————— **1 մաս**


$800 : 4 = 200$ գր. - 1 մաս

3 մասը = 600 գր.

Պատասխան. պետք է վերցնել 600 գր. 10% լուծույթ և 200 գր. 50 %.

№ 10. 40% և 10 % լուծույթները խառնելով ստացել են 25%-ոց լուծույթ: Առաջին և երկրորդ լուծույթներից որքա՞ն մասեր են վերցվել:

Սա 9 խնդրի հակառակ խնդիրն է:



$$40 - 25 = 15$$

$$25 - 10 = 15$$

Առաջին լուծույթի մի մասը և երկրորդ լուծույթի մի մասը


I գր. — - ?

II գր. — - ?

№11. ՀԱՅՏՆԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՅՈՎ ԼՈՒԾՈՒՅԹԻՆ ՋՐԻ

ԱՎԵԼԱՑՈՒՄԸ: ՆՈՍՐԱՑՈՒՄ:

Որքա՞ն ջուր է պետք ավելացնել 60 %-ոց 100գր.լուծույթին, որպեսզի ստացվի 30 %-ոց լուծույթ:




$$\begin{aligned}
 60 - 30 &= 30 \\
 30 - 0 &= 30 \\
 + 100 \text{ գր. ջուր.} \\
 100 + 100 &= 200
 \end{aligned}$$

ՍՏՈՒԳՈՒՄ. $200 \text{ ————— } 60$
 $100 \text{ ————— } ? = 30$

№12 ՀԱՅՏՆԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՅՈՎ ԼՈՒԾՈՒՅԹԻՆ ՋՐԻ

ԱՎԵԼԱՑՈՒՄԸ:

Որքա՞ն լուծվող նյութ – աղ է անհրաժեշտ ավելացնել 100գր. 60 % լուծույթին, որ ստացվի 80 % լուծույթ:



$$\begin{aligned}
 80 - 60 &= 20 \\
 100 - 80 &= 20 \text{ հավասար մասեր.} \\
 + 100 \text{ գր աղ.} \\
 100 + 100 &= 200 \text{ Դ.} \\
 60 + 100 &= 160 \text{ Դ.}
 \end{aligned}$$

$200 \text{ ————— } 160$
 $100 \text{ ————— } ? = 80 \text{ գր.}$

Պատասխան. ավելացվում է 100 գր. աղ:

ԽՆԴԻՐՆԵՐ - ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ:

Խառնեցին 5 գր աղը 45 ջրի հետ: Որքան է տոկոսային կոնցենտրացիան:

$$45 + 5 = 50$$

$$50 \text{ ————— } 5$$

$$100 \text{ ————— } ?$$


$$100 \times 5 = 500$$

$$500 : 50 = 10$$

Պատասխան. **10 տոկոս:**

2. Պահանջվում է պատրաստել 1 կգ 15-տոկոսանոց ամիակի լուծույթ՝ 25-տոկոսանոց լուծույթից: Որքան գրամ 25-տոկոսանոց լուծույթ և ջուր է անհրաժեշտ վերցնել դրա համար:

$$1 \text{ կգ} = 1000 \text{ գր.}$$



$$\text{ԸՆԴՀԱՆՈՒՐԸ } 3 + 2 = 5 \text{ ՄԱՍ.}$$

$$1000 \text{ գր.} \text{ ————— } 5 \text{ մաս}$$

$$? \text{ ————— } 1 \text{ մաս}$$


$$1 \text{ մաս} = 200 \text{ գր.}$$

$$2 \text{ մաս} = 400 \text{ գր.}$$

$$3 \text{ մաս} = 600 \text{ գր.}$$

Պատասխան. պետք է վերցնել **600 գ. 25%-ոց** ամիակի լուծույթը և ավելացնել պակասող $1000 - 600 = 400 \text{ գր}$ ջուրը:

3. Ավելացնել ջուր 400 գր. 95 – տոկոսանոց ծծմբաթթվին, որպեսզի ստանան 19-ը տոկոսանոց թթու: Որքա՞ն լիտր ջուր է անհրաժեշտ դրա համար և որքա՞ն կհլոգրամ նոսրացված թթու կստացվի:




ԸՆԴՀԱՆՈՒՐ Ը 4 + 1 = 5 ՄԱՍ.

$$\begin{array}{l} 100 \text{ գր.} \quad \text{—————} \quad 95 \text{ գր.} \\ 400 \text{ գր.} \quad \text{—————} \quad ? = 380 \text{ գր.} \end{array}$$

Ելակետային 95% լուծույթում կար $400 \cdot 0,95 = 380$ (գր) մաքուր ծծմբաթթու (մնացած 20 գր. - ջուր է): Ջրի ավելացումով ծծմբաթթվի ծավալը չի փոխվում, ուրեմն, **19%-ոց** ծծմբաթթվի ընդհանուր ծավալը կկազմի $380 / 0,19 = 2000$ (գր), կամ **2 կգ.**

Պատասխան. Պետք է վերցնել **400 գ. 95%-ոց լուծույթը ավելացնել 2000–400 = 1600գր. անհրաժեշտ ջուրը:**

Որքան գրամ աղ (կալցիումի նիտրատ) պետք է ավելացնել 200 գր. նոր 10%- ոց լուծույթին, որ ստացվի 20%-ոց լուծույթ?



$$\begin{array}{l} 200 \text{ գր.} \quad \text{—————} \quad 8 \text{ ժ} \\ 25 \text{ գր.} = ? \quad \text{—————} \quad 1 \text{ -ժ} \end{array}$$

$$200 + 25 = 225$$

$$\begin{array}{l} 225 \text{ գր.} \quad \text{—————} \quad 45 \\ 100 \text{ գր.} \quad \text{—————} \quad ? = 20 \end{array}$$

ԱՅԼ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐ.

200 գրամ 10% ող լուծույթի մեջ կա 20գր. կալիումի նիտրատ, նշանակում է 180 գրամ (90%) այլ նյութ: Պահանջվում է ավելացնել այնքան կալիումի նիտրատ (x), որ այդ 180 գրամ ուրիշ նյութը կազմի 80%:

$$\begin{array}{r} 180 \text{ գ.} \quad \text{-----} \quad 80 \\ 225 \text{ գր.} = ? \quad \text{-----} \quad 100 \end{array}$$

Լուծում.

$$0,1 \times 200 = 20 \text{ գր.}$$

նշենք x-ը ավելացրած աղի քանակ, ապա

$$0,2 = (20+x) : (200+x)$$

$$x = 25$$

Կա 5 լիտր սպիրտ և 11 լիտր ջուր. նրանց խառնուրդով լուծույթը դարձավ 25% ող սպիրտ: Որքան է սպիրտի տոկասը 5 լիտրում:

$$5 + 11 = 16 \text{ լ.}$$

$$100 \text{ գր.} \quad \text{-----} \quad 25 \text{ գր.}$$

$$16000 \quad \text{-----} \quad x$$

$$X = 4000$$

16 լ. լուծույթում կա 12 լ. ջուր և 4 լ. սպիրտ

$$12 - 11 \text{ լ.} = 1 \text{ լ. ջուր}$$

Ստացվող լուծույթում կա 1 լ. ջուր + 4 լ. սպիրտ = 5 լ.

$$5 \text{ լ.} \quad \text{-----} \quad 4 \text{ լ.}$$

$$100 \quad \text{-----} \quad x$$

$$x = 80 \quad \text{պատասխան. } 80\%$$

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. - Փիլիսոփայության մասը կազմող՝ ճանաչողության մասին գիտության՝ գնոսեպոլոգիայի մեջ տրված է, որ ճանաչողությունը լինում է չորս տեսակի՝ սենսուալ, ինտելեկտուալ, ռացիոնալ և իռացիոնալ:

Ռոզենտալ. «Փիլիսոփայական բառարան»:

Մխենա № 1:

2. - Արդի հոգեբանության տվյալների համաձայն՝ ճանաչողական պրոցեսները, ինչպիսիք են՝ զգայությունները, հիշողությունը, մտածողությունը, խոսքը և այլն, հանդիսանում են հիմնական՝ ինֆորմացիայի ստացման, պահպանման, մշակման և հաղորդման համար:

«Ընդհանուր հոգեբանություն»: Բոգոսլովսկի Վ.Վ.

Մխենա № 2

3. – Մաթեմատիկայում, ինֆորմատիկայում (կիրառական մաթեմատիկա), որպես ճշգրիտ գիտություն, հոգեբանության տվյալների հիման վրա ստեղծեցին համակարգիչներ և ծրագրեր նրանց համար:

Ինֆորմացիայի ստացման համար՝ մուտքային համակարգ- սկաներներ և ստեղնաշար. պահպանման համար՝ սկավառակներ, ինֆորմացիայի մշակման համար՝ պրոցեսոր և հաղորդման համար՝ տալիչներ եւ պլոտտերներ:

«Ինֆորմատիկա»:

Մխենա № 3

4. - Տրամաբանության մեջ, ինչպես այլ ճշգրիտ գիտություններում, ցույց է տրվում, որ մտածողության հիմնական ֆունկցիան է ճշմարտության որոնումն ու ապացուցումը:

Արիստոտել. «Տրամաբանություն»:

5. - Էվրիստիկայում՝ ստեղծագործության մասին գիտությունում, տրված է ստեղծագործության և գիտական, և գեղարվեստական կարևորագույն դերը:

6. – Քերականության մեջ նշված է, որ նշանները լինում են երեք տեսակի՝ Պատկերներ (փամփուշտի, ոտքի կամ ինչ-որ բանի հետքը); **Ինդեքսներ** (տառեր, թվեր) և **Միմվոլներ** (բառեր և այլն):

Գրիգորև «Դասական տրամաբանություն»

ՖԵՆՈՄԵՆՆԵՐ

ԱՐԱԳ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Ջորդանո Բրունոն կարող էր մեկ անգամ նայելով գրքի էջին՝ հետագայում վերհիշել ամբողջը՝ բաց չթողնելով մեկ բառ անգամ: Նա դա ցույց տվեց Հռոմի Պապի ներկայությամբ՝ մեծ հրճվանք պատճառելով վերջինիս:

Մեր ժամանակներում նույնը կարող էր կատարել նշանավոր սովետական հետախույզ **Աբելը (Ալեքսանդր Բելով):**

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Բառերի, Տեքստի, Անունների, Դեմքերի, Գույների, Ձևերի, Գաղափարների, Տեղանքի, Երաժշտության, Թվերի, Առարկաների հիշողություն.

Բառեր – Շերեշևսկի. “Փոքրիկ գրքույկ՝ մեծ հիշողության մասին”. Ա.Պ.Լուրիա:

Անուններ - Արիստոտել. Գիտեր բոլոր համաքաղաքացիների անունները:

Գույներ - Վոլֆ Մեսսինգ. հիշել մի քանի տասնյակ գույների հերթականությունը:

Թվեր – Լավրինենկո. Հիշում էր հարյուր երկնիշ թիվ:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Արագ հաշվարկ – **Գուրշտեյնը** հաղթեց լավագույն արագ հաշվարկող **Արագոյին**: Հնդկուհի **Դեվին**՝ արագությամբ հաղթեց համակարգչին՝ խնդիրների և օրինակների լուծման մեջ:

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

4-րդ դարում հույն գիտնական **Արիստոտելը** տվեց տրամաբանություն գիտությունը ,և նրա կիրառումը ռազմարվեստում բերեց հաղթանակներ: Իր աշակերտ **Ալեքսանդր Մակեդոնացին** տանուլ չէր տվել և ոչ մի ճակատամարտ: Ռուս մեծ զորավար **Ալեքսանդր Սուվորովը** ևս չէր կրել ոչ մի պարտություն: Խաղաղ ժամանակներում տրամաբանության տիրապետումը բերում է հաղթանակներ թշնամու նկատմամբ բանավեճի միջոցով: 5-րդ ոսկեդարում հայ մեծ գիտնական **Դավիթ Անհաղթը**, ում չկարողացավ հաղթել և ոչ մի օտարերկրյա փիլիսոփա:

ՀՈՒՏՈՐՈՒԹՅՈՒՆ

Լեվիտան –Ռուս հանրաճանաչ ռադիո-հաղարդավար,որը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ կարդում էր Մովսեսական Ինֆորմբյուրոյի հաղորդագրությունները: Միայն դրա համար ինքը՝ Հիտլերը նրան համարում էր իր համար մեկ թշնամին: Իրեն հավասարը չունեի նաև ամերիկացի իրավապաշտպան **Մարտին Լյուտեր Կինգը**:

ՕՏԱՐ ԼԵՉՈՒՆԵՐ

Հույն հնագետ **Շլիմանը մի** քանի օրում սովորեց ռուսերեն լեզուն, որը համարվում է ամենադժվար լեզուներից մեկը աշխարհում:

Մեսինգը 3 օրում սովորեց շվեդերեն այնպես,որ նույնիսկ լրագրողները գրել էին, որ նա կարծես թե տասնյակ տարիներ ապրել էր Շվեդիայում: Պոլիգլոտները կարող են սովորել տասնյակ և ավելի լեզուներ:

Յ.Ն.Ռերիխը գիտեր 27 լեզու: Կան մարդիկ, որոնք գիտեն 500- ից ավելի լեզուներ:

ՄԵԹՈՂՆԵՐ

ԱՐԱԳ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Իմաստային համեմատության մեթոդի միջոցով:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիշողության զարգացումն ասոցիատիվ մեթոդի կիրառմամբ. հասարակ (նմանություն, տարբերություն, խառը) և բարդ (իմաստային):

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Խնդիրների լուծման ընթացքի ալգորիթմացման մեթոդի միջոցով : Արագացված հաշվարկման պրոցեսը հաղթահարվում է ալգորիթմի մեթոդով:

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ձեռք է բերվում տրամաբանական 12 օպերացիաների միջոցով.

վերլուծություն և սինթեզ

ընդհանրացում և սահմանափակում

ապստրագիզիվանիա և կոնկրետացում

սահմանում և բաժանում

հաստատում և հերքում

ներածություն և եզրակացություն:

Կրուտեցկի Վ.Ա. <<Հոգեբանություն>>

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Պատճառա - հետևանքային կապերի որոնման հետազոտական մեթոդները լինում են 4 տեսակի՝ **համեմատում (նմանեցում և տարբերություն) , մնացորդ և ուղեկցող փոփոխություն :**

Վինոգրադով .<<Լոգիկա>>

